ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«16» փետրվար 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-19/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Գալիմա» ՍՊԸ-ի 10.02.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գալիմա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 10.02.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է «Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «12ՀԴՊ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2016թ. հայտերի բացման նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հրավերի փաթեթում առկա գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին. այն է՝ գնային առաջարկի 5-րդ սյունակում ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը, համաձայն պահանջված ձևի լրացվում է, եթե մասնակիցը ավելացված արժեքի հարկ վճարող է, ինչը հակասում է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթներին, համաձայն որի, եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված անհիմն որոշման արդյունքում Ընկերության շահերը ոտնահարվել են, ինչպես նաև «Գալիմա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից համապատասխան չափաբաժինների մասով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից ներկայացված նվազագույն գնային առաջարկները:

Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-19/17 բողոքը քննող հանձնաժողովին ուղղված 16.02.2017թ. գրությամբ խնդրել է առանց քննության թողնել 10.02.2017թ. ներկայացված բողոքը:

2. ԳԲԽ-19/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, հիմք ընդունելով «Գալիմա» ՍՊԸ-ի 16.02.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 19/17 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացված՝ բողոքը առանց քննության թողնելու

մասին դիմումը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից 10.02.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-19/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան